ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ-ՏՄԴՀ-ԲՄԱՇՁԲ-26/02

ք. Դիլիջան «____» մարտի 2026 թ.

Դիլիջանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Աթաբեկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա և «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Սարգսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, կոնսորցիումը (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրի ներգյուղական 3-րդ, 11-րդ, 13-րդ փողոցների տուֆապատման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում **ՀՀ-ՏՄԴՀ-ԲՄԱՇՁԲ-26/02** ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալատուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ մինչև 30.12.2026թ:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել 5 օրվա ընթացքում:Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալատուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնոյությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եաղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75- տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը.

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1095 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն

էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **151 992 000** (մեկ հարյուր հիսունմեկ միլիոն ինը հարյուր իննսուներկու հազար) ՀՀ դրամ, որից **25 332 000** (քսանհինգ միլիոն երեք հարյուր երեսուներկու հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին **79 992 000** (յոթանասունինը միլիոն ինը հարյուր իննսուներկու հազար) ՀՀ դրամ՝ որից **13 332 000** (տասներեք միլիոն երեք հարյուր երեսուներկու հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

2-րդ չափաբաժին **45 000 000** (քառասունհինգ միլիոն) ՀՀ դրամ՝ որից **7 500 000** (յոթ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

3-րդ չափաբաժին **27 000 000** (քսանյոթ միլիոն) ՀՀ դրամ՝ որից **4 500 000** (չորս միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու

դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից հեռացված չեն աղբը, կենցաղային թափոնները և օտար առարկաները (աշխատանքների իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև շինարարական օբյեկտը սահմանված կարգով շահագործման հանձնելը)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
2	Գրունտի հանույթից առաջացած ավելցուկային նյութը և հողի վերին շերտը չեն տեղափոխվում և պահվում հատուկ նախատեսված վայրերում	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
3	Ծառաթփային բուսականությունը հատված է (հատումը իրականացվում է միայն նախագծային փաստաթղթերով նախատեսված դեպքերում)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 1.0 տոկոսի չափով
4	Ծառահատման և տեղափոխման ոչ ենթակա ծառերն ու թփերը ցանցապատված և պաշտպանված չեն	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 1.0 տոկոսի չափով
5	Հասարակությանը իրազեկելու նպատակով անհրաժեշտ տեղեկատվական վահանակները տեղադրված չեն (ծրագծի սկզբում և վերջում)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
6	Վտանգավոր տեղամասը ցանկապատված չէ, շինարարական տեղամասում պահպանված չեն ժամանակավոր երթևեկության կազմակերպման պահանջները (տեղադրված չեն նախազգուշացնող նշաններ, աշխատանքային տեղամասերը կահավորված չեն լուսաազդանշանային առկայծող լապտերներով և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 1.0 տոկոսի չափով

7	Տեղամասերում շինարարական աղբը կուտակված է, թափոնները չեն տեղափոխվել հատուկ հատկացված վայրեր	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 1.0 տոկոսի չափով
8	Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմը չեն կրում հատուկ արտահագուստ և տեխնոլոգիական գործընթացներին համապատասխան պաշտպանիչ հանդերձանք (ձեռնոցներ, սաղավարտներ, ակնոցներ և այլն	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
9	Շինարարական աշխատանքների ընթացքում չի պահպանվում օդի փոշոտվածության կանխարգելման պահանջները (փոշի առաջացնող աշխատանքների դեպքում շինարարական հրապարակը պարբերաբար չի խոնավեցվում ջրի շիթով և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով
10	Շինարարական հրապարակում օգտագործվող շինարարական տեխնիկան և մեքենա-մեխանիզմները բավարար տեխնիկական վիճակում չեն (կան ավելորդ արտանետումներ, աղմուկ, վառելիքի և քսայուղերի արտահոսք	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Սույն պայմանագիրը կազմված է 23 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 ,N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դիլիջանի համայնքապետարան
Քաղ. Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 900402057013
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն

Համայնքի ղեկավար Դ. Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ
Քաղ. Իջևան, Նալբանդյան 1/1
ՀՎՀՀ 07621825
ՀՀ 1570065208350400

Տնօրեն Ա. Սթաբեկյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ
Քաղ. Իջևան, Նալբանդյան 1/1
ՀՎՀՀ 04225743
ՀՀ 220013333657000

Տնօրեն Ա. Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
« » մարտի 2026 թ. կնքված
ՀՀ-ՏՄԴՀ-ԲՄԱՇՁԲ-26/02 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

«ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԵՂՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆԵՐԳՅՈՒՂԱԿԱՆ 3-ՐԴ ՓՈՂՈՑԻ ՏՈՒՖԱՊԱՏՈՒՄ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN	Աշխատանքների անվանումը	չափման միավոր	Ծավալը	Միավորի արժեքը	Итого Ընդամենը (հազար դրամ)
1	3	5	6	7	8
	I. Հողային աշխատանքներ				
1	11 (13-V) կարգի բնահողի փխրեցում հիդրոմուրճով	մ^3	217.36	4.99	1084.6264
2	Նախօրոք փխրեցված 11 (13-V) կարգի բնահողի մշակում և բարձում էքս 1,5մ^3 շ.տ ա/ի և տեղափոխում լցակույտ 5 կմ	մ^3	434.72	1.757	763.80304
3	9.6(9-IV) կարգի բնահողի մշակում և բարձում էկս 1,5մ^3 շ.տ ա/ի և տեղափոխում լցակույտ 5 կմ	մ^3	616.93	1.544	952.53992
4	9.6(9-IV) բնահողի մշակում բուլդոզերով, տեղափոխում լիցք 50մ (հարթում, ջրում, խտացում)	մ^3	9.80	1.164	11.4072
	II. Երթևեկելի մաս				
1	Երթևեկելի մասի, իջատեղերի և մուտքերի եզրային հատվածների ամրացում միաձույլ բետոնով B-20 (եզրաշար 20x40սմ)	գծմ	209.52	5.101	1068.76152
2	Միաձույլ բետոնի B-20 (եզրաշար 20x40սմ) հիմքի համար նախատեսվող ավազակոպիճային շերտ h=5սմ	մ^3	2.1	12.193	25.6053
3	Խճային հիմք h=15սմ	մ^2	2583.65	1.845	4766.83425
4	Լվացած ավազային շերտ h=10սմ	մ^2	2583.65	1.152	2976.3648
5	Երթ. մասի տուֆե 18x20x40սմ ծածկույթ (շաղախ)	մ^2	2583.65	4.276	11047.6874
	III. Իջատեղեր և մուտքեր				
1	11 (13-V) կարգի բնահողի փխրեցում հիդրոմուրճով	մ^3	26.105	4.981	130.029005
2	Նախօրոք փխրեցված 11 (13-V) կարգի բնահողի մշակում և բարձում էքս 1,5մ^3 շ.տ ա/ի և տեղափոխում լցակույտ 5 կմ	մ^3	52.21	1.724	90.01004
3	9.6(9-IV) կարգի բնահողի մշակում և բարձում էկս 1,5մ^3 շ.տ ա/ի և տեղափոխում լցակույտ 5 կմ	մ^3	44.84	1.577	70.71268
4	Խճային հիմք h=15սմ	մ^2	262.30	1.846	484.2058
5	Լվացած ավազային շերտ h=10սմ	մ^2	262.30	1.152	302.1696
6	Երթ. մասի տուֆե 18x20x40սմ ծածկույթ (շաղախ)	մ^2	262.30	4.276	1121.5948
	V. Ջրահեռացում երթևեկելի մասից				
1	Երկայնական վաք Ե-2-20				
	Ե-2-20 հավաքովի երկայնական բետոնե վաքերի տեղադրում	հատ	64	14.245	911.68
2	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ^3	3.20	9.719	31.1008

15	11 (13-V) կարգի բնահողի բարձում ա/ի 1.0մ³ շ. տ. էքս., և տեղափոխում լցակույտ 5կմ հեռ. Վրա	մ³	43.871	1.616	70.895536
16	Հետադարձ լիցք բուդոզերով 9.6 (9-IV)	մ³	107.25	0.876	93.951
17	Հետադարձ լիցք ձեռքով 9.6 (9-IV)	մ³	2.20	2.183	4.8026
18	9.6 (9-IV) կարգի բնահողի բարձում ա/ի 1.0մ³ շ. տ. էքս., և տեղափոխում լցակույտ 5 կմ հեռ. Վրա	մ³	97.616	1.562	152.476192
				Общий Ընդհանուրը	**73795.297**
				НДС 20% ԱԱՀ 20%	**14759.059**
				Общий Ընդհանուրը	**88554.357**

* Կապալառուն աշխատանքները կատարում է Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրի 3-րդ փողոց հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դիլիջանի համայնքապետարան
Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 900402057013
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական կպարտություն

Համայնքի ղեկավար Դ. Սարգսյան

/ստորագրություն/
Կ.S

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ
Ք. Իջևան, Նալբանդյան 1/1
ՀՎՀՀ 07621825
ՀՀ 1570065208350400

Տնօրեն Ա. Աթարեկյան

/ստորագրություն/
Կ.S

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ
Ք. Իջևան, Նալբանդյան 1/1
ՀՎՀՀ 04225743
ՀՀ 220013333657000

Տնօրեն Ա. Սարգսյան

/ստորագրություն/
Կ.S

Հավելված թիվ 1
« » մարտի 2026 թ. կնքված
ՀՀ-ՏՄԴՀ-ԲՄԱՇՁԲ-26/02 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

«ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԵՂՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆԵՐԳՅՈՒՂԱԿԱՆ 11-ՐԴ ՓՈՂՈՑԻ ՏՈՒՖԱՊԱՏՈՒՄ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN	Աշխատանքների անվանումը	չափման միավոր	Ծավալը	Միավորի արժեքը	Итого Ընդամենը (հազար դրամ)
1	3	5	6	7	8
	I. Հողային աշխատանքներ				
1	11 (13-V) կարգի բնահողի փխրեցում հիդրոմուրճով	մ³	55.58	4.977	276.62166
2	Նախօրոք փխրեցված 11 (13-V) կարգի բնահողի մշակում և բարձում էքս 1,5մ³ շ.տ ա/ի և տեղափոխում լցակույտ 5 կմ	մ³	111.16	1.743	193.75188
3	9.6(9-IV) կարգի բնահողի մշակում և բարձում էկս 1,5մ³ շ.տ ա/ի և տեղափոխում լցակույտ 5 կմ	մ³	359.67	1.527	549.21609
4	9.6(9-IV) բնահողի մշակում բուլդուզերով, տեղափոխում լիցք 50մ (հարթում, ջրում, խտացում)	մ³	0.80	1.151	0.9208
	II. Երթևեկելի մաս				
1	Երթևեկելի մասի, իջատեղերի և մուտքերի եզրային հատվածների ամրացում միաձույլ բետոնով B-20 (եզրաշար 20x40սմ)	գծմ	470	5.101	2397.47
2	Միաձույլ բետոնի B-20 (եզրաշար 20x40սմ) հիմքի համար նախատեսվող ավազակոպիճային շերտ h=5սմ	մ³	4.7	12.221	57.4387
3	Խճային հիմք h=15սմ	մ²	1352.5	1.845	2495.3625
4	Լվացած ավազային շերտ h=10սմ	մ²	1352.5	1.152	1558.08
5	Երթ. մասի տուֆե 18x20x40սմ ծածկույթ (շաղախ)	մ²	1352.5	4.275	5781.9375
	III. Իջատեղեր և մուտքեր				
1	11 (13-V) կարգի բնահողի փխրեցում հիդրոմուրճով	մ³	33.78	4.981	168.25818
2	Նախօրոք փխրեցված 11 (13-V) կարգի բնահողի մշակում և բարձում էքս 1,5մ³ շ.տ ա/ի և տեղափոխում լցակույտ 5 կմ	մ³	67.56	1.755	118.5678
3	9.6(9-IV) կարգի բնահողի մշակում և բարձում էկս 1,5մ³ շ.տ ա/ի և տեղափոխում լցակույտ 5 կմ	մ³	110.56	1.541	170.37296
4	Խճային հիմք h=15սմ	մ²	481.42	1.846	888.70132
5	Լվացած ավազային շերտ h=10սմ	մ²	481.42	1.152	554.59584
6	Երթ. մասի տուֆե 18x20x40սմ ծածկույթ (շաղախ)	մ²	481.42	4.275	2058.0705

Ընդհանուրը	49748.555

* Կապալառուն աշխատանքները կատարում է Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրի 11-րդ փողոց հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դիլիջանի համայնքապետարան
Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 900402057013
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն

Համայնքի ղեկավար Դ. Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ
Ք. Իջևան, Նալբանդյան 1/1
ՀՎՀՀ 07621825
ՀՀ 1570065208350400

Տնօրեն Ա. Աթարեկյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ
Ք. Իջևան, Նալբանդյան 1/1
ՀՎՀՀ 04225743
ՀՀ 220013333657000

Տնօրեն Ա. Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
« » մարտի 2026 թ. կնքված
ՀՀ-ՏՄԴՀ-ԲՄԱՇՁԲ-26/02 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

«ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԵՂՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆԵՐԳՅՈՒՂԱԿԱՆ 13-ՐԴ ՓՈՂՈՑԻ ՏՈՒՖԱՊԱՏՈՒՄ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN	Աշխատանքների անվանումը	չափման միավոր	Ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը (հազար դրամ)
1	3	5	6	7	8
	I. Հողային աշխատանքներ				
1	10e-IV(9.6)կարգի բնահողի մշակում և բարձում էկս 1,5մ³ շ.տ ա/ի և տեղափոխում լցակույտ 5 կմ	մ³	545.73	1.543	842.06139
	II. Երթևեկելի մաս				
1	Երթևեկելի մասի, իջատեղերի և մուտքերի եզրային հատվածների ամրացում միաձույլ բետոնով B-20 (եզրաշար 20x40սմ)	գծմ	506	5.118	2589.708
2	Միաձույլ բետոնի B-20 (եզրաշար 20x40սմ) հիմքի համար նախատեսվող ավազակոպիճային շերտ h=5սմ	մ³	5.06	12.263	62.05078
3	Խճային հիմք h=15սմ	մ²	1476.5	1.852	2734.53356
4	Լվացած ավազային շերտ h=10սմ	մ²	1476.5	1.157	1708.34521
5	Երթ. մասի տուֆե 18x20x40սմ ծածկույթ (շաղախ)	մ²	1476.5	4.292	6337.26676
	III. Իջատեղեր և մուտքեր				
1	10e-IV(9.6)կարգի բնահողի մշակում և բարձում էկս 1,5մ³ շ.տ ա/ի և տեղափոխում լցակույտ 5 կմ	մ³	114.4	1.546	176.8624
2	Խճային հիմք h=15սմ	մ²	309.18	1.853	572.91054
3	Լվացած ավազային շերտ h=10սմ	մ²	309.18	1.157	357.72126
4	Երթ. մասի տուֆե 18x20x40սմ ծածկույթ (շաղախ)	մ²	309.18	4.292	1327.00056
	IV. Ճանապարհային նշաններ				
1	Նոր ճան. նշանների տեղադրում, ԳՕՍՏ Ռ 52290-2004 , այդ թվում՝				
	- առավելության	հատ	1	27.18	27.18
2	Բետոն B-15	մ³	0.105	47.645	5.002725
3	Կանգնակ մետ. խող 57/4մմ	գծմ	3.4	5.411	18.3974
	V. Ջրահեռացում երթևեկելի մասից				
1	Երկայնական վաք Ճ-2-20				
	Ճ-2-20 հավաքովի երկայնական բետոնե վաքերի տեղադրում	հատ	308	14.289	4401.012
2	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	15.4	9.748	150.1192
3	Ջրամեկուսացում	մ²	292.6	1.18	345.268
	Ջրընդունիչ 30x34սմ - 1տեղ / 5.3գծմ				
1	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	0.371	9.748	3.616508
2	Միաձույլ ե/բ B-20	մ³	0.636	110.087	70.015332
3	Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	մ²	4.028	1.18	4.75304
	Ամրան				
1	Ø 12 A-500c L=550 ԳՕՍՏ 34028-2016	կգ	15.529	0.426	6.615354

2	Ø 8 Ac-1 L=1000 ГОUS 34028-2016	կգ	10.494	0.48	5.03712
3	Ø 12 A-500c L=390 ГОUS 34028-2016	կգ	21.995	0.426	9.36987
4	Ø 12 A-500c L=1000 ГОUS 34028-2016	կգ	18.815	0.426	8.01519
	ՑԱՆՑ				
1	L 70x7մմ L=1000 ГОUS 8509.93	կգ	78.334	1.815	142.17621
2	L 63x6մմ L=996 ГОUS 8509.93	կգ	80.37	1.815	145.87155
3	L 63x6մմ L=450 ГОUS 8509.93	կգ	22.3	1.815	40.4745
4	50x10մմ L=434 ГОСТ	կգ	99.16	1.815	179.9754
	Ջրհորի կառուցում միաձույլ բետոնից B 20, F100				
1	Հող. աշխատանքներ 10e-IV(9.6)կարգի բնահողում փոսորակների փորման համար էքս.1,0մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 5.0կմ հեռ. վրա	մ³	11.200	1.733	19.4096
2	Հող. աշխատանքներ 10e-IV(9 .6) կարգի բնահողում փոսորակների փորման համար էքս.1,0մ³ կողքի վրա կուտակելով հետադարձ լիցքի համար	մ³	10.000	0.673	6.73
3	Գլխամասի կազմատում հիդրոմուրճով բարձում էքս.1,0մ3 շ.տ.ա/ի և տեղափ. լցակույտ 5.0կմ հեռ. վրա	մ³	1.000	30.954	30.954
4	Ավազակոպճային նախապ. h=10սմ	մ³	1.653	10.397	17.186241
5	միաձույլ բետոն B 20, F100	մ³	21.06	80.313	1691.55241
6	Մետաղական ցանցի պատրաստում և տեղադրում	կգ	1379.03	0.784	1081.15952
7	Քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով				
	բետոն	մ²	38.50	1.122	43.197
8	Հետադարձ լիցք				
	բուլդոզերով (10e-IV(9 .6))	մ³	9.00	0.875	7.875
	ձեռքի աշխատանքով (10e-IV(9 .6))	մ³	1.00	2.188	2.188
				Ընդհանուրը	**25171.612**
				ԱԱՀ 20%	**5034.322**
				Ընդհանուրը	**30205.934**

* Կապալառուն աշխատանքները կատարում է Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրի 13-րդ փողոց հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դիլիջանի համայնքապետարան
Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 900402057013
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն

Համայնքի ղեկավար Դ. Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ
Ք. Իջևան, Նալբանդյան 1/1
ՀՎՀՀ 07621825
ՀՀ 1570065208350400

Տնօրեն Ա. Աթաբեկյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ
Ք. Իջևան, Նալբանդյան 1/1
ՀՎՀՀ 04225743
ՀՀ 2200133333657000

Տնօրեն Ա. Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« » մարտի 2026 թ. կնքված
ՀՀ-ՏՄԴՀ-ԲՄԱՇՁԲ-26/02 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*

«ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԵՂՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆԵՐԳՅՈՒՂԱԿԱՆ 3-ՐԴ, 11-ՐԴ, 13-ՐԴ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՏՈՒՖԱՊԱՏՈՒՄ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրի ներգյուղական 3-րդ փողոցի տուֆապատում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	01.12.2026
2	Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրի ներգյուղական 11-րդ փողոցի տուֆապատում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	01.12.2026
3	Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրի ներգյուղական 13-րդ փողոցի տուֆապատում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	01.12.2026
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դիլիջանի համայնքապետարան
Քաղ. Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 900402057013
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն

Համայնքի ղեկավար Դ. Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ
Քաղ. Իջևան, Նալբանդյան 1/1
ՀՎՀՀ 07621825
ՀՀ 1570065208350400

Տնօրեն Ա. Աթաբեկյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ
Քաղ. Իջևան, Նալբանդյան 1/1
ՀՎՀՀ 04225743
ՀՀ 220013333657000

Տնօրեն Ա. Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231177	Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրի ներգյուղական 3-րդ փողոցի տուֆապատում	0	0	0	7999200	15998400	27997200	27997200	79992000	79992000	79992000	79992000	79992000	**79992000**
2	45231177	Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրի ներգյուղական 11-րդ փողոցի տուֆապատում	0	0	0	4500000	9000000	15750000	15750000	45000000	45000000	45000000	45000000	45000000	**45000000**
3	45231177	Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրի ներգյուղական 13-րդ փողոցի տուֆապատում	0	0	0	2700000	5400000	9450000	9450000	27000000	27000000	27000000	27000000	27000000	**27000000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դիլիջանի համայնքապետարան
Քաղ. Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 900402057013
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն

Համայնքի ղեկավար Դ. Սարգսյան
_____
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ
Քաղ. Իջևան, Նալբանդյան 1/1
ՀՎՀՀ 07621825
ՀՀ 1570065208350400

Տնօրեն Ա. Աթաբեկյան
_____
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ
Քաղ. Իջևան, Նալբանդյան 1/1
ՀՎՀՀ 04225743
ՀՀ 220013333657000

Տնօրեն Ա. Սարգսյան
_____
/ստորագրություն/
Կ.Տ